



«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

Հայ-Ռուսական համալսարանի
Դեկտոր, ա.գ.դ., պրոֆեսոր

Է.Մ. Սանդոյան
«19» հունիսի 2023 թ.

ԿԱՐԾԻՔ

Արշակ Հարությունի Վարժապետյանի «Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Ատենախոսությունը քննարկվել է Հայ-Ռուսական համալսարանի «Էկոնոմիկայի և ֆինանսների» ու «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնների 2023 թվականի հունիսի 16-ի համատեղ նիստում (արձանագրություն թիվ 06-23):

Մասնակցում էին՝

Սանդոյան Էդվարդ Մարտինի՝ տնտեսագիտ. դոկտոր, պրոֆ., **Ներսեսյան Կարեն Վասիլիի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Ոսկանյան Մարիամ Համբարձումի՝** տնտեսագիտ. դոկտոր, դոցենտ, «Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ, **Զախյան Էլիզա Միքայելի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Կարապետյան Էդգար Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Իրինա Բորիսի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (**գրախոսող**), «Տնտեսագիտության տեսության և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների» ամբիոնի վարիչ, **Սարգսյան Ռուզաննա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Տիգրանյան Վարսիկ Իշխանի,** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Մնացականյան Լիդա Արմենի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Էսթեր Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Հակոբյան Արմինե Արզումանի՝** ավագ դասախոս, **Ավետիսյան Լարիսա Աշոտի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Աղաջանյան Արմինե Վլադիմիրի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Գալստյան Անի Համլետի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ (**գրախոսող**), **Հանիսյան Հրայր Հովիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, դոցենտ, **Պետրոսյան Գարիկ Արմենակի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս (**գրախոսող**), **Պետրոսյան Հեղինե Գագիկի՝** տնտեսագիտ. թեկնածու, ավագ դասախոս, **Նաշիկյան Լիլիա Աշոտի՝** ավագ դասախոս, **Սարգսյան Լիլիթ Կարենի՝** ավագ դասախոս, **Կարապետյան Անուշ Արմենի՝** դասախոս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Դրամավարկային քաղաքականությունը տնտեսությունում դրամաշրջանառության և վարկերի տեղաբաշխման գործում իրականացվող միջոցառումների համալիր է, որի վերջնական նպատակը կայուն տնտեսական աճի ապահովումն է: Այն ուղղված է գնաճի մակարդակի և դինամիկայի կարգավորմանը, ներդրումային միջավայրի կայուն ակտիվությանն ու աճին, ազգային արժույթի (դրամի) կայունության ապահովմանը և շուկայական տնտեսության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, և վերջապես, նշված ամբողջ գործողությունների համախմբի արդյունքում, գործազրկության մակարդակի վրա ազդեցությանը՝ կրճատման տեսքով:

Դրամավարկային քաղաքականության սխալ վարման արդյունքում երկրում առաջանում են շոկեր, գնաճը շեղվում է թույլատրելի սահմանից, ինչը հանգեցնում է երկրում տնտեսական անկայունության: Տնտեսական անկայունությունը ուղղակիորեն անդրադառնում է նաև դրամավարկային քաղաքականության և ֆինանսական կայունության վրա, որի հետևանքով տնտեսվարողները գնում են չարաշահումների և խուսափում են հարկերից, իսկ բնակչության մոտ տեղի է ունենում կենսամակարդակի վատթարացում: Այդ իսկ պատճառով մեր կողմից դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրը դիտարկվել է որպես խիստ արդիական, հատկապես COVID-19 համավարակի, 44-օրյա արցախյան պատերազմի և ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 200-րդ հոդվածով ամրագրված է, որ երկրում դրամավարկային քաղաքականության պատասխանատուն ՀՀ կենտրոնական բանկն է, որը այն իրականացնում է փողի առաջարկի կամ գնի փոփոխման միջոցով: Նշվածը կենտրոնական բանկն ամրագրում է իր դրամավարկային քաղաքականության ծրագրով, մշակում այն, հաստատում և իրականացնում: Երկրում դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում գնաճի թույլատրելի մեծությունը կազմում է 4 տոկոս $\pm 1,5$ տոկոս թույլատրելի շեղմամբ:

Դրամավարկային քաղաքականության իրականացմամբ՝ համապատասխան գործիքների կիրառության միջոցով, կենտրոնական բանկը փողը ներարկում կամ ներքաշում է տնտեսություն առաջացնելով նաև իրացվելիություն: Բացի այդ, կենտրոնական բանկի կողմից փողի գնի կառավարմամբ երկրում նպատակադրված գնաճին հասնելու համար միաժամանակ կիրառում է արտարժույթային քաղաքականություն՝ երկրում արտարժույթի և արժույթի կառավարման համար, և մակրոպրոդեցնցիալ քաղաքականություն՝ երկրի ֆինանսական կայունության պահպանման և կարգավորման համար:

Տնտեսության կենսունակությունը պահպանելու նպատակով երկրում վարվող տնտեսական քաղաքականությանը մասնակցում են համաժամանակյա և՛ կառավարությունը, և՛ կենտրոնական բանկը: Եթե կենտրոնական բանկը պատասխանատվություն է կրում դրամավարկային, արժույթային, մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունների, ապա կառավարությունը՝ հարկաբյուջետային քաղաքականության համար:

Ատենախոսությունում դիտարկվել է ոչ միայն դրամավարկային քաղաքականությունը իր ածանցյալներով, այլ նաև վերջինիս փոխառնչությունները. գնահատելով հարկաբյուջետային և մակրոպրոդեցնցիալ քաղաքականությունների վրա դրամավարկային քաղաքականության ազդեցությունը, տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը բանկային

համակարգի վրա, կապն իրական հատվածի հետ: Բացի այդ, ատենախոսությունում ուսումնասիրվել է կանխիկ և անկանխիկ գործառնությունների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, գների կայունության ապահովման համար կենտրոնական բանկի միջամտությունը վերջինիս կարգավորման գործում, ինչպես նաև ներկայացվել են գների և ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղիները:

Դրամավարկային քաղաքականության ժամանակակից մոդելի և փորձի ուսումնասիրության և դիտարկման համար աշխատանքում անդրադարձ է կատարվել Ամերիկայի Միացյալ Նահանգների, Կանադայի, Շվեյցարիայի և Մեծ Բրիտանիայի դրամավարկային քաղաքականության մոդելներին և փորձին և այն դիտարկվել է Հայաստանի դրամավարկային քաղաքականության համատեքստում:

Ատենախոսությունը նվիրված է դրամավարկային քաղաքականության հիմնախնդիրներին, առկա վիճակին, մինչ այս վարված քաղաքականությանը, վերջինիս նպատակի իրագործման համար ձևավորված արդի հիմքերի ուսումնասիրությանը, գործնականում դրանց կիրառմանը: Ատենախոսի կողմից առաջարկվել է նոր ֆինանսական քաղաքականության բանաձևի սահմանման և կիրառության արդարացվածությանը, ինչի կիրառումը կբերի տնտեսության զարգացմանը և խելացի և տրամաբանական գնահատմանը, ինչով էլ պայմանավորված է սույն ատենախոսության թեմայի արդիականությունն:

Վերոհիշյալ հարցադրումների քննարկմանն ու որոշակի առաջարկությունների մշակմանն է նվիրված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Արշակ Հարությունի Վարժապետյանի ատենախոսությունը: Ներկայացված հիմնախնդիրներով էլ պայմանավորված են թեմայի ընտրությունն ու արդիականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության նպատակն է դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատումը Հայաստանի Հանրապետության տնտեսության վրա, վերջինիս արդյունքում առաջացած խնդիրների բացահայտումը և կարգավորման ուղիների շրջագծումը:

Ատենախոսության հիմքում դրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրվել է դրամավարկային քաղաքականություն հասկացությունը, էությունը և ներկայացվել է ժամանակակից փորձը,
- ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականության և իրական հատվածի փոխառնչությունները,
- ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության ազդեցությունը մակրոարդյունքային և հարկաբյուջետային քաղաքականությունների վրա,
- ուսումնասիրվել և գնահատվել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը բանկային համակարգի վրա,
- ուսումնասիրվել և գնահատվել է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից բանկերի նորմատիվային կապիտալում լրացուցիչ կապիտալի մասնաբաժնի փոփոխության ազդեցությունը վարկավորման ծավալների և դրամավարկային քաղաքականության գործիքակազմի վրա,

- գնահատվել է ՀՀ կենտրոնական բանկի միջամտության ազդեցությունը գների կայունության վրա,
- ուսումնասիրվել և գնահատվել են ՀՀ-ում փողի զանգվածի վրա ազդող գործոնները, դրանց կառավարման առանձնահատկությունները զարգացման արդի փուլում,
- ուսումնասիրվել և գնահատվել է կանխիկ և անկանխիկ գործառնությունների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, ինչպես նաև հետևանքները տնտեսության համար,
- ուսումնասիրվել և գնահատվել է ինովացիոն գործիքակազմի ներդրման ազդեցությունը տնտեսության, հատկապես՝ փողի զանգվածի վրա,
- ուսումնասիրվել և գնահատվել է հրապարակային առաջարկվող արժեթղթերի հավանական մանիպուլյացիաների ազդեցությունը դրամավարկային քաղաքականության վրա, հաշվի առնելով, ինչպես ՀՀ-ում ցուցակվող արժեթղթերի սակավությունը, այնպես էլ ֆոնդային բորսայի թույլ զարգացվածությունն ու կիրառական հետաքրքրության բացակայությունը,
- հարկաբյուջետային քաղաքականության մասով՝ ուսումնասիրվել և գնահատվել է հարկերով բեռնվածության և կախվածության մակարդակը և դրա ազդեցությունը դրամավարկային քաղաքականության, ինչպես նաև գործազրկության մակարդակի կրճատման վրա,
- ներկայացվել է ՀՆԱ և փողի զանգվածով արտահայտված փողի «քնելու» միտումը,
- ուսումնասիրվել և վեր են հանվել մի քանի նոր եզրույթներ, որոնք բնութագրում են տնտեսական քաղաքականության մեջ առանձին կարգավորման ուղին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՆՈՐՈՒՅԹԸ

Կատարված հետազոտությունների, վերլուծությունների և ներկայում առկա հիմնախնդիրների ուսումնասիրության արդյունքում հետազոտությունում հեղինակը կարևորել է ստորև ներկայացված կիրառական գիտական արդյունքները, որոնք իր կարծիքով գիտական նորույթ են պարունակում: Մասնավորապես.

- Գնահատվել և վերլուծվել է ՀՀ տնտեսական քաղաքականությունը, որի հիման վրա առաջարկվել է բանաձև, ինչը հնարավորություն է տալիս որոշել ՀՀ ԿԲ և կառավարության ազդեցությունների մասնաբաժինները տնտեսության վրա, ինչպես նաև գնահատվել է գնաճի առաջացման չափը՝ ըստ պատասխանատուների: Ընդ որում, ՀՀ կառավարության և ՀՀ ԿԲ-ի ազդեցությունները գնահատվել են «1»-ական գործակիցներով և դրանց հարաբերությունը կազմել է 1:1-ին: Վերջինիս արդյունքում առաջարկվում է սահմանել նաև գնաճի թույլատրելի շեղման համար պատասխանատվության շրջանակ, և սահմանային կառավարման ժամանակաշրջան ու ճանապարհային քարտեզ, ինչը նկարագրված կլինի կոնկրետ գործողությունների տրամաբանական և փոխկապակցված հաջորդական գործառույթների տեսքով: Դրանց չիրականացման համար առաջարկվում է կիրառել պատասխանատվության կառուցակարգեր՝ տնտեսության պարալիզացման և տնտեսական շուկերի առաջացման համար,
- բացահայտվել է արժեթղթերի թողարկման, ցուցակման և տեղաբաշխման գործուն կառուցակարգերի ներդրման անհրաժեշտությունը, որը հարկաբյուջետային

քաղաքականության մասով կառավարությանը, որպես թիվ մեկ պատասխանատու կդարձնի հակակշռող ֆինանսական գործիքներով՝ պետական պարտատոմսերով, փողի զանգվածի կառավարմանը միջամտելու համար: Սրա արդյունքում, գնաճի պարագայում, որպես տնտեսության կառավարման բարձրագույն մարմին, պատասխանատվություն կսահմանվի ՀՀ պետական բյուջեի մասին օրենքի չկատարման համար, իսկ ՀՀ կենտրոնական բանկը՝ նույն օրենքի 4-րդ հոդվածի խախտման համար, սխալ քաղաքականության կիրառման արդյունքում ՀՀ օրենսդիր մարմնի՝ Ազգային ժողովի կողմից հաստատված թույլատրելի շեղման համար,

- առաջարկվել է «քնած» կամ «քնող» փողի եզրույթ, որի էությունը կայանում է նրանում, որ տնտեսության մեջ առկա փողի զանգվածը ՀՆԱ-ի նկատմամբ տարեցտարի ավելի քիչ շրջապտույտ կատարելու հակում ունենալով ցույց է տալիս երկրի ներսում բնակչության խնայողություններ ձևավորելու հակումը, որն արտահայտվում է փողի շրջապտույտի արագության նվազմամբ,
- առաջարկվել է նոր՝ ՀՆԱ/վարկ հարաբերակցության սահմանումը, որի էությունը կայանում է նրանում, որ ֆինանսական շուկերին դիմակայելու համար, բացի Բազելային կոմիտեի մեթոդաբանությամբ բուֆերներ ստեղծելուց, շուկերը կանխելու համար պետք է երկրում սահմանվի վերին արգելակող ցուցանիշ՝ ի համեմատ ՀՆԱ-ի երկրում տեղաբաշխված վարկային միջոցների համար: Հետագայում վարկ/ՀՆԱ ավելի մեծ ճեղքերից (GAP) խուսափելու և դրանք կանխելու համար, կախված երկրի սահմանված տնտեսական ախորժակից և հետաքրքրությունից, կապիտալի հակացիկլիկ զսպողական բուֆերին զուգընթաց, առաջարկվող արգելակող ցուցանիշը կարող է փոփոխվել,
- ուսումնասիրության արդյունքում բացահայտվել է մանիպուլյացիոն հավանական սխեմա և այն ներկայացվել որպես գիտական նորույթ, ինչը էական դեր կարող է ունենալ IPO իրականացնող կազմակերպության զարգացման և թափանցիկության ապահովման գործում: Նորույթի էությունը կայանում է նրանում, որ մեր առաջարկած «կապիտալի մկներ» կամ «դիվիդենտ կրճողներ» նոր եզրույթը բնութագրում է ընկերության կառավարման մարմինների կողմից ցուցանիշների արհեստական բարելավման էությունը, այն է՝ արհեստական իրացվելիության ստեղծման միջոցով իրական պատկերից տարբերվող, կեղծ արդյունքի հասնելը: Իսկ «կույր բաժնետերեր» եզրույթը բնութագրում է կազմակերպության կառավարման ամենօրյա գործընթացում մասնակցություն չունեցող բաժնետերերի կողմից ներդրված ակտիվների ճակատագրի չտիրապետման և կառավարման գործընթացներում մասնակցության իրավասության և հնարավորության բացակայության պատճառով վնասների կրման պրակտիկան, որի արդյունքում ի հաշիվ հասույթի, կեղծ կամ տրանսֆորմացված ճանապարհով, արագացված կերպով իրականացվում է IPO-ի անցում տեղաբաշխում և կանոնադրական կապիտալի ուժեղացում, ինչը դասական բաժնեմասնակցության ձև չէ: Բացի դա, այն ազդում է դրամավարկային քաղաքականության վրա այնքանով, որքանով նշված տեղաբաշխված բաժնետոմսերով համալրված կանոնադրական կապիտալի մասով ՀՀ ԿԲ կողմից իրացվելիության ներարկման ժամանակ

տեղաբաշխված գումարների չափով չի օգտագործվում դրամավարկային քաղաքականության գործիքներով իրացվելիության ներարկումը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունում ուսումնասիրված խնդիրները դիտարկված են արդիական հատկապես COVID-19 համավարակի, 44-օրյա արցախյան պատերազմի և ռուս-ուկրաինական հակամարտության համատեքստում:

Ատենախոսության որոշ տեսական և գործնական արդյունքներ կարող են կիրառական նշանակություն ունենալ նաև հիմնախնդիրն ուսումնասիրող տնտեսագետների, պետական կառավարման մարմինների արտաքին տնտեսական հարաբերությունների գծով պատասխանատուների, ոլորտին առնչվող մասնավոր կառույցների, ինչպես նաև այլ շահագրգիռ անձանց համար:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից՝ յուրաքանչյուրը երեք ենթագլուխներով, եզրակացությունների և առաջարկությունների մասից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Ատենախոսությունը պարունակում է 22 աղյուսակ, 2 գծապատկեր և ներկայացված են թվով 3 հավելվածներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակն ու հիմնախնդիրները, տրված են առարկան և օբյեկտը, ներկայացված են ուսումնասիրության հիմնական արդյունքներն ու գիտական նորոպը, դրանց գիտա-գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Դրամավարկային քաղաքականություն հասկացությունը, փորձը և կապն իրական հատվածի հետ» գլխում ուսումնասիրվել են դրամավարկային քաղաքականություն (այսուհետ՝ ԴՎՔ) հասկացությունը, ԴՎՔ իրականացման և կարգավորման ժամանակակից փորձը, ԴՎՔ և իրական հատվածի միջև կապը: ԴՎՔ հասկացությունում ուսումնասիրվել է ՀՀ Սահմանադրությամբ և «Կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով ՀՀ կենտրոնական բանկին տրված լիազորությունների, նպատակների շրջանակը, ԴՎՔ խնդիրները, տրվել է մեկնաբանում գնաճի վերաբերյալ: Մեկնաբանվել և տարանջատվել են ըստ Ջոն Մեյնարդ Բեյնսի և Միլտոն Ֆրիդմանի:

Ատենախոսության երկրորդ՝ «Դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների փոխառնչությունները և առանձնահատկությունները ՀՀ-ում» գլխում ներկայացվել են գների և ֆինանսական կայունության ապահովումը, որոնք ՀՀ կենտրոնական բանկին վերապահված, անկախ, առանց որևէ կառավարման մարմնի ենթակայության, գործառույթներն են, որոնք ամրագրված են ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով:

Ատենախոսությունում դիտարկվել են մի քանի տարբեր հանգամանքներ, որոնք կախված ՀՀ ԿԲ կողմից վարվող քաղաքականությունից ուղղակի կամ անուղղակի կերպով է

անդրադարձել տնտեսության կայունության վրա: Այսինքն, քննարկման առարկա է դիտարկվել այն հանգամանքը, թե ՀՀ ԿԲ-ն իր իրավասության ներքո գտնվող հնարավորություններն ու միջոցները որքանով է օգտագործել ի շահ ՀՀ տնտեսության զարգացմանը: Փողի գինը կարելի է դիտարկել և հասկանալ պահուստավորման տոկոսադրույքի փոփոխությունից նաև: Գնահատելու համար ԴՎՔ տոկոսադրույքների փոփոխությունների ազդեցությունը տնտեսական համակարգի վրա դիտարկվել են մի քանի փոփոխություններ և միջամտություններ ՀՀ ԿԲ կողմից, որոնք ըստ հեղինակի դատողությունների ունեցել են էական ազդեցություն տնտեսության վրա: Մասնավորապես՝

- Դիտարկվել են տնտեսության մեջ ֆիսկալ, դրամավարկային և արժույթային քաղաքականությունների մասնաբաժինները ՀՆԱ-ում և արտահայտվել բանաձևի տեսքով,
- Դիտարկվել են դրամավարկային քաղաքականության գործիքների փոփոխությունների դինամիկան, ազդեցությունը և հնարավոր հետևանքները,
- Փոխարժեքի փոփոխության ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա:

ՀՆԱ-ում ֆիսկալ, դրամավարկային և արժույթային քաղաքականությունների մասնաբաժինները դիտարկելով խնդիր է դրվել հասկանալու, թե տնտեսության մեջ կառավարությունն ու կենտրոնական բանկն իրարից անկախ ինչ չափով ու ձևով են ազդում, որը բերում է տնտեսության զարգացմանը: ՀՆԱ-ում քաղաքականությունների մասնաբաժինների գնահատման համար սահմանվել է ֆինանսական քաղաքականության նոր բանաձև, որը արտահայտվել է հետևյալ կերպ՝ $EP=FP+MP+FEP$

Որտեղ՝ EP-ն տնտեսական քաղաքականությունն է (**Economic policy**), FP-ն ֆիսկալ կամ հարկաբյուջետային քաղաքականությունը (**Fiscal policy**), MP-ն մոնետար կամ դրամավարկային քաղաքականությունը (**Monetary policy**), FEP-ն արտարժույթային քաղաքականությունը (**Foreign Exchange policy**):

Ատենախոսության երրորդ՝ «**Գների կայունության ապահովումը և փողի զանգվածի կառավարման կատարելագործումը**» գլխում հեղինակը պնդում է, որ գների կայունությանը կարևոր է հասնել ոչ միայն շուկայական միջոցառումների օգնությամբ: Հեղինակը պնդում է, որ տնտեսական կյանքին ուղղակիորեն միջամտելով տնտեսական քաղաքականության պատասխանատուները պետք է իրականացնեն իրենց կառավարման և վերահսկման ներքո գտնվող քաղաքականությունների գործիքակազմերն այնպես, որ վերջիններիս արդյունքում հաստատվի գների կայունություն, այլ ոչ թե տեղի ունենա գնաճ: Այդ իսկ պատճառով սույն գլխում ուսումնասիրվել է հարկերով բեռնվածության մակարդակը, հարկերից բյուջեի կախվածությունը հարկաբյուջետային քաղաքականության համատեքստում, իսկ մակրոպրոդեյնցիալ քաղաքականության մասով՝ Բազելյան կոմիտեի կողմից սահմանված չափորոշիչներով ֆինանսական շուկերին դիմակայելու ունակությունը: Ուսումնասիրությամբ փաստվել է, որ բյուջեն խիստ կախման մեջ է հարկերից, իսկ ՀՆԱ-ն գրեթե 20% կախման մեջ է հարկերից: Մակրոպրոդեյնցիալ քաղաքականության մասով հեղինակը ուսումնասիրել է վարկ/ՀՆԱ ճեղքը տարեկան ցուցանիշներով այնպես, ինչպես պահանջվում է Բազել III-ով, և եռամսյակային կտրվածքով, ինչպես որ հաշվարկում է ՀՀ ԿԲ-ն: Երկու դեպքում էլ փաստվել է, որ ՀՀ ԿԲ կողմից 2019-2022թթ. ժամանակահատվածում, բացի 2020թ. 2-րդ եռամսյակից 2021թ. 3-րդ եռամսյակը, մնացած բոլոր ժամանակահատվածում ՀՀ ԿԲ-ն պետք է կիրառել բուֆերներ, որը որ չի կիրառվել:

Փողի զանգվածի վրա մեծ ազդեցություն ունի նախ կազմակերպությունների կողմից հրապարակային առաջարկի տեսքով (IPO) կանոնադրական կապիտալի համալրումը: Նշվածի արդյունքում կազմակերպություններում՝ հատկապես ֆինանսական, իրականացվում է կապիտալի համալրում, որի արդյունքում ստեղծվում է կազմակերպությունում հավելյալ իրացվելիություն, ինչպես նաև հավելյալ փող: Սա նշանակում է, որ ֆինանսական կազմակերպությունների կողմից բաժնետոմսերի հրապարակային առաջարկով միջոցների ներգրավումն առավել արդյունավետ է վերջիններիս համար և՛ իրացվելիության, և՛ անտոկոս փողի տեսանկյունից: IPO-ներով կանոնադրական կապիտալի համալրման իրականացումը դիտարկել ենք եկամտի հնարավոր մանիպուլացիայի համատեքստում, հաշվի առնելով այն, որ ՀՀ-ում ՀՀ Վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակված է 721 բաց բաժնետիրական ընկերություններից միայն 27-ն են Հայաստանի Ֆոնդային Բորսայի թողարկողներ՝ 3,74 տոկոսը: Կարևոր է դիտարկել նաև այն հանգամանքը, որ ՀՀ-ում գործող բաժնետիրական 721 ընկերություններից 11 կամ 1,53 տոկոսն են ցուցակում իրենց բաժնետոմսերը բորսայում, ինչը նշանակում է, որ Հայաստանում դեֆակտո առկա չէ բաժնետոմսերի հրապարակային առաջարկ:

Այնուամենայնիվ, իրականացնելով հասույթի տրանսֆորմացում նշանակում է, որ չի առաջանում բիզնես գործընթացների իրականացման արդյունքում ակնկալվող համապատասխան շահույթ, որը հարկումից հետո դիվիդենտի տեսքով պետք է բաշխվեր մասամբ կամ ամբողջությամբ բաժնետերերին: Արդյունքում չի ձևավորվում՝

- Իրական շահույթը, որը այլ հավասար պայմաններում պետք է ձևավորվեր բիզնես գործընթացների իրականացման արդյունքում,
- Չի ձևավորվում և չի վճարվում համապատասխան շահութահարկը և ԱԱՀ-ն բյուջե,
- Չի վճարվում այն ծավալով շահաբաժիններ, ինչի արդյունքում էլ չի վճարվում դիվիդենտի վճարման դիմաց եկամտային հարկը:

IPO իրականացման ժամանակ «կապիտալի մկներ»-ի կամ «դիվիդենտ կրծողներ»-ի որոշումների իրականացման արդյունքում կարևոր է դիտարկել նաև դրանց մոտեցումները համաձայն ՖՀՄՄ-ների:

Այսպիսով, կարելի է եզրահանգել, որ հասույթի տրանսֆորմացումը բաժնետոմսերի անմիջականորեն ազդում է մեկ բաժնետոմսի դիմաց վճարվող դիվիդենտի գումարի վրա ոչ միայն այն պատճառով, որ արտացոլված շահույթը հասույթից բաժնետոմսերի տրանսֆորմացման արդյունքում փոքրացրել է առկա կամ ապագա ժամանակաշրջանի շահույթը, այլ նաև այն պատճառով, որ նոր տեղաբաշխված բաժնետոմսերի քանակի ավելացումը ընդհանուր բաժնետոմսերի կշռված միջին քանակի հաշվարկում, առավել է փոքրացնում դիվիդենտի չափը: Նշված իրադարձությունների ի հայտ գալն անմիջականորեն կարող է հանգեցնել կազմակերպության տարեկան աուդիտորական դիտարկման արդյունքը չլինի դրական կարծիքով՝ ձևափոխված, բացասական կամ կարծիքից հրաժարմամբ: Այսպիսով՝ կարող ենք ասել, որ ԴՎԲ ճիշտ կառավարման համար կարևոր է փողի զանգվածի ճիշտ կառավարումը, որի իր մեջ ներառում է արտահոսքերի դեմ պայքարն ու տնտեսական շուկերի ժամանակ համապատասխան միջոցառումներ իրականացումը:

Բացի գնաճի կարգավորումից երկրում ֆինանսական և տնտեսական անվտանգության համար կարևոր է նաև ֆինանսական կայունությունը: Ֆինանսական կայունության համար

կենտրոնական բանկը իրականացնում է մակրոպրոդենցիալ քաղաքականություն: Այս քաղաքականության նպատակը ֆինանսական հատվածի համակարգային ռիսկերի բացահայտումն, զսպումը և չեզոքացնում է, որոնք պետք է նպաստեն երկրում ֆինանսական կայունության ապահովմանը: Քանի որ բանկերում վարկային տեղաբաշխման դինամիկան այնպես չի ինչպես արտերկրից ստացված տրանսֆերները, ապա կապիտալի հակացիկլիկ բուֆերով դիտարկել ենք ֆինանսական կայունության համատեքստում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ատենախոսությունում առկա են մի շարք թերություններ: Ատենախոսության վերնագիրն է՝ «Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)», որը բավական արդիական և հետաքրքիր թեմա է, հատկապես ներկա պայմաններում, երբ ինչպես համաշխարհային, այնպես էլ ՀՀ տնտեսությունում առկա են դրամավարկային քաղաքականության ոլորտում էական մարտահրավերներ: Սակայն, հեղինակը աշխատանքում անդրադարձել է մի շարք լայն հարցերի, ներառելով հարկաբյուջետային և մակրոպրոդենցիալ քաղաքականության քննարկումները (ընդ որում վերջիններիս անհարկի մեծ տեղ հատկացնելով), ներկայացրել է տարատեսակ գնահատումներ, որոնք սակայն չեն հանգեցրել աշխատանքի հիմնական խնդրի իրագործմանը՝ տնտեսության վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության գնահատմանը: Ընդհանուր առմամբ, աշխատանքում կիրառվել են բավական պարզունակ հաշվարկներ, որոնց խորությունը բավական ցածր է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսությանը ներկայացվող պահանջներից: Ատենախոսությունում արտացոլված գիտական նորոյթները հիմնականում չունեն բավարար վերլուծական հիմք, հիմնված են սխալ հաշվարկների վրա կամ ընդհանրապես նորոյթ չեն կարող համարվել: Աշխատանքում առկա են նաև մի շարք սխալ ուղղությամբ իրականացված վերլուծություններ և անհիմն եզրակացություններ:

Նշված դիտարկումները առավել մանրամասն ներկայացված են ստորև:

1. Դրամավարկային քաղաքականության ազդեցությունների գնահատմանը նվիրված աշխատանքում, որևէ խոսք չկա այնպիսի կարևոր գործոնների մասին, ինչպիսիք են տոկոսադրույքի կապը մակրոտնտեսական այլ ցուցանիշների հետ, դրամավարկային քաղաքականության փոխանցման տարբեր ուղիները և դրանց դրսևորումները ՀՀ-ում, կանոնների վրա հիմնված քաղաքականության իրականացումը, սպասումների դերը, ԿԲ թափանցիկության և հաղորդակցության դերը և այլն: Աշխատանքում չեն կիրառվել ազդեցությունների քանակական գնահատման գործիքներ, որոնք ժամանակակից տնտեսագիտական վերլուծություններում առանցքային դեր ունեն:

2. Աշխատանքի 1-ին նորոյթը իրենից ներկայացնում է նոր մշակված բանաձև, որով հնարավոր է գնահատել տնտեսության և գնաճի վրա հարկաբյուջետային, դրամավարկային և արժույթային քաղաքականությունների ազդեցության մասնաբաժինները: Ձևակերպումը բավական հավակնոտ է և հետաքրքիր, սակայն իրականում չի համապատասխանում կատարված աշխատանքին: Հեղինակը որպես տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության ազդեցություն կիրառել է բյուջեի եկամուտների կշիռը ՀՆԱ-ում, իսկ որպես դրամավարկային քաղաքականության ազդեցություն՝ փողի ազրեգատների և

միջազգային պահուստների կշիռը: Սա դեմ է տնտեսագիտական մտածողության բոլոր կանոններին, քանի որ այս ցուցանիշները չեն բնութագրում քաղաքականությունների ազդեցությունները տնտեսության վրա, առավել ևս գնաճի վրա: Հարկերի կշիռը ՀՆԱ-ում կարող է ցույց տալ պետական բյուջեի չափը ՀՆԱ-ի նկատմամբ, սակայն ոչ ազդեցության չափը: Հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը գնահատելու համար, պետք է դիտարկել կառուցվածքային պակասուրդի փոփոխությունը: Դրամավարկային քաղաքականության մասով, հայտնի է, որ 2006թ.-ից ԿԲ-ն անցել է գնաճի թիրախավորման ռազմավարությանը և որպես ազդեցության գործիք կիրառվում է տոկոսադրույքը: Փողի ազդեցատները 2006 թվականից կորցրել են տնտեսության վրա ԿԲ քաղաքականության դերի բնութագրման հատկությունը: Ավելի խնդրահարույց և անընդունելի է այն, որ հեղինակը դիտարկել է այդ կշիռների գումարի 100-ին հավասար լինելու գաղափարը և եզրակացրել է, որ եթե փողի ազդեցատների կշիռը ՀՆԱ-ում ավելի մեծ է, քան հարկերի կշիռը, ապա ԴՎԲ-ն գերակա դիրք ունի: Հետևաբար կարող ենք նշել, որ սա չի կարող համարվել նորոյթ, այն պարզ պատճառով, որ հիմնված է սխալ ենթադրությունների և հաշվարկների վրա:

3. 2-րդ նորոյթը իրենից ներկայացնում է առաջարկություն, որի վերաբերյալ ընդհանրապես չկա որևէ վերլուծություն: Այն պարզապես նույն ձևակերպմամբ գրված է աշխատանքի 69-րդ էջում, և անհասկանալի է, թե որտեղից է գալիս այդ առաջարկությունը:

4. Ատենախոսության 3-րդ նորոյթում առաջարկվում են նոր եզրույթներ՝ «քնած» կամ «քնող» փող: Այս եզրույթները նկարագրում են Ֆիշերի հավասարման հիման վրա գնահատված փողի շրջապտույտի արագության դանդաղումը: Վերջինս հեղինակը ներկայացրել է որպես խնայողությունների աճի ցուցիչ և անվանել է «քնած» կամ «քնող» փող: Սակայն, կատարված հաշվարկը բավական պարզունակ է և ոչ ամբողջական: Հայտնի է, որ խնայողությունների ցուցանիշը կարելի է հաշվարկել տնօրինվող եկամտի և սպառման ցուցանիշների միջոցով, հետևաբար, հեղինակը պետք է հաշվարկեր խնայողությունների ցուցանիշը և գոնե դրա դինամիկայի միջոցով հիմնավորեր իր եզրակացությունը: Բացի այդ, փողի շրջապտույտի արագության դանդաղման մասին խոսելիս պետք էր նաև ներկայացնել դրա պատճառները, ինչպես նաև միջազգային համեմատականներ, որպեսզի պարզ լիներ, թե արդյո՞ք դա միայն ՀՀ տնտեսությանը բնորոշ երևույթ է, թե այլ երկրներում նույնպես տեղի է ունենում փողի շրջապտույտի արագության դանդաղում:

5. Ատենախոսության չորրորդ նորոյթով հեղինակը առաջարկում է սահմանել վարկեր/ՀՆԱ (որը հավանաբար սխալմամբ նշված է ՀՆԱ/վարկեր) հարաբերակցության սահմանային շեմ: Այս նորոյթը հիմնված է վարկեր/ՀՆԱ ճեղքի գնահատման և կապիտալի հակացիկլիկ բուֆերի սահմանման վերլուծության վրա: Վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ճեղքը՝ հաշվարկված է Hodick-Prezcott վիճակագրական ֆիլտրի միջոցով (արդյունքները ներկայացված են էջ 97-ից 102-ի աղյուսակներում): Սակայն, հաշվարկներն ակնհայտորեն սխալ են իրականացված, քանի որ ըստ աղյուսակի 2009-2014թթ. գրանցվել է վարկեր/ՀՆԱ-ի էական դրական ճեղք, այն դեպքում, երբ ցուցանիշը բավական ցածր էր, իսկ դրա աճին զուգահեռ, ճեղքը դարձել է էականորեն բացասական: Մեր կողմից փորձ է արվել կրկնել

հեղինակի հաշվարկները, որի արդյունքում պարզ է դարձել, որ հեղինակը ճեղքի գնահատականները սխալ է ստացել (հավանաբար Excel միջավայրում բանաձևի սխալ կիրառման արդյունքում): Հետևաբար դրա հիման վրա կատարված եզրակացությունները նույնպես սխալ են: Արդյունքում ստացվում է, որ նորույթը հիմնված է ոչ ճշգրիտ գնահատումների վրա:

6. Աշխատանքի 1-ին գլխի 1.3 բաժինը վերնագրված է «Դրամավարկային քաղաքականության և իրական հատվածի միջև կապը», որտեղ հեղինակը ներկայացնում է դրամավարկային և այլ մակրոտնտեսական քաղաքականությունների՝ տնտեսության վրա ազդեցությունների համեմատություններ: Սակայն, որևէ խոսք չկա դրամավարկային քաղաքականության հիմնական գործիքի՝ տոկոսադրույքի տնտեսության վրա ունեցած ազդեցությունների և փոխանցման ուղիների վերաբերյալ: Այնինչ, դրանք ատենախոսության թեմայի ներքո հիմնական ուսումնասիրության հարցերը պետք է լինեին:

7. Ատենախոսությունում առկա են մի շարք գիտականորեն ոչ ճշգրիտ մտքեր և եզրակացություններ: Մասնավորապես՝

- 13-րդ էջի երկրորդ պարբերությունում նշվում է հետևյալը. «ՀՀ ԿԲ-ն 2023թ. նպատակադրել է առաջիկայում գնաճի նվազում՝ որոշ ապրանքների և ծառայությունների գների բարձր պահպանմամբ», որից կարելի է ենթադրել, որ ԿԲ թիրախավորել է որոշ ապրանքների և ծառայությունների գները պահպանել բարձր մակարդակում, այնինչ Գնաճի հաշվետվությունում (որին հղում է կատարել հեղինակը), միտքը ուրիշ կերպ է ձևակերպված. վերջինս ոչ թե ԿԲ նպատակադրումն է, այլ կանխատեսումը, ըստ որի ընդհանուր գնաճը կդանդաղի, սակայն որոշ ապրանքների և ծառայությունների գները կշարունակեն պահպանվել բարձր մակարդակում:
- 14-րդ էջում, Մ. Ֆրիդմանի և Շվարցի կողմից իրականացված աշխատանքի մասին մեջբերումը նույնպես պարունակում է անճշտություններ:
- էջ 51-ում, Աղյուսակ 2.1.3-ի ցուցանիշների հիման վրա նշվում է հետևյալ միտքը. «ՀՀ տնտեսությունում կա այնքան փոքր, որքան չի եղել վերջին 16 տարիներից ոչ մեկի ժամանակ: Սա ևս փաստում է, որ ՀՀ-ում փողը լճացել է»: Հեղինակի կատարած եզրակացությունը անհիմն է և ոչ գիտական: Աղյուսակում բերված բոլոր տարիների փողի զանգվածի ցուցանիշը ավելի մեծ է, քան նախորդ տարիներինը, ինչը պետք է հեղինակին հուշեր, որ փողի զանգվածի անվանական մակարդակը անընդհատ աճող ցուցանիշ է, և այդ աճը առանձին վերցրած չի կարող մեկնաբանվել որպես փողի լճացում: Այլապես ստացվում է, բոլորի տարիների համար կարելի է պնդել որ փողը լճացել է:
- Աշխատանքի որոշ հատվածներում (օրինակ 68-րդ էջում) խոսվում է տնտեսության «պարալիզացման» մասին, սակայն չի հստակոցվում այդ տերմինի նշանակությունը և կիրառման պատճառը:
- 92-րդ էջում՝ Աղյուսակ 3.1.1-ում ներկայացվում է հարկային եկամուտների, ՀՆԱ-ի ցուցանիշները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը: Նախ հարկային եկամուտները

անհարկի կտրացված են, ինչը խեղաթյուրում է պատկերը: Կարելի էր պարզապես մլրդ դրամներով ներկայացնել: Բացի այդ, ցուցանիշներն անհամադրելի են, քանի որ 2013թ. առաջ գործող սոցիալական վճարները չեն գումարվել հարկային եկամուտներին: Այդ իսկ պատճառով 2013թ. նկատվում է հարկեր/ՀՆԱ-ի կտրուկ աճ, ինչը սակայն հարկային եկամուտների դասակարգման փոփոխության արդյունք է և պետք է ճշգրտվի վերլուծությունների իրականացման ժամանակ:

8. Հավելված 2-ում հարկերի ազդեցությունը բյուջեի եկամուտների վրա գնահատելու համար կիրառվել է վիճակագրական գործիք, այնինչ հարկերի բյուջեի եկամուտների տարր է հանդիսանում և հարկի մեկ միավորի ավելացումը բնականաբար հանգեցնելու է եկամուտների մեկ միավորով ավելացման: Հետևաբար, այդ կապը բացահայտելու համար որևէ վիճակագրական գործիքի կիրառման անհրաժեշտություն չկա, և կիրառված մոտեցումը անհասկանալի է: Ավելին, հեղինակը եզրակացնում է, որ այդ ազդեցությունը նույնը չէ, նշելով, որ մեկ միլիոնով հարկերի նվազումը հանգեցնում է եկամուտների 0.251-0.078 մլն դրամով նվազման: Անհասկանալի է, թե ինչպես են եկամուտները ավելի քիչ նվազում քան հարկերի նվազումն է: Առնվազն պետք էր հիմնավորել ստացված արդյունքը: Էլ ավելի խնդրահարույց է այն, որ իրականացված սխալ հաշվարկը հեղինակը ներկայացնում է, որպես տնտեսական շուկերի դեպքում բյուջեի եկամուտների հարվածի տակ լինելու փաստարկ, այնինչ ինչպես տնտեսական շուկերի ցուցանիշներ, այնպես էլ տնտեսական ակտիվության որևէ ցուցանիշ մոդելում ներառված չէ:

9. Դրամավարկային քաղաքականության միջազգային փորձի հատվածում ցանկալի էր տեսնել վիճակագրական վերլուծություն՝ դիտարկված երկրներում դրամավարկային քաղաքականության դինամիկան ցույց տալու համար: Ինչպես նաև պարզ չէ, թե ինչու են դիտարկվել միայն զարգացած երկրները (ԱՄՆ, Կանադա, Շվեյցարիա, Մեծ Բրիտանիա): Հաշվի առնելով, որ աշխատանքը նվիրված է ՀՀ օրինակին, ատենախոսությունն էապես կշահեր նաև զարգացող երկրների փորձի ուսումնասիրման պարագայում:

10. Աշխատանքի 3.3 կետում ներկայացված գների և ֆինանսական կայունության ապահովման հիմնական ուղիների ենփադրյալ արդյունավետությունը բավականաչափ հիմնավորված չէ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նշված դիտողությունները ազդում են հետազոտության արդյունքների տեսական ու կիրառական նշանակության վրա:

Ամփոփելով կարող ենք նշել, որ ատենախոսությունում գիտական քննարկման տարերը սակավ են և պարունակում են մասնագիտական սխալներ: Հիմնական վերլուծությունները պարզունակ են և ոչ բավարար եզրակացություններ կատարելու համար: Արդյունքում, հեղինակին չի հաջողվել իրականացնել ատենախոսության թեմային համապատասխան վերլուծություն, ինչի հետևանքով սահմանված գիտական խնդիրները չեն լուծվել: Հաշվի առնելով վերոգրյալը կարծում ենք, որ աշխատանքը ունի էական վերանայման կարիք:

Արշակ Հարությունի Վարժապետյանի «Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածականատենախոսությունը ինքնուրույն հետազոտություն է:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակվել են 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի կարևոր դրույթներն ու արդյունքները:

Այսպիսով, Արշակ Հարությունի Վարժապետյանի «Դրամավարկային քաղաքականության ազդեցությունը տնտեսության զարգացման վրա (ՀՀ օրինակով)» թեմայով թեկնածուականատենախոսությունը մասամբ է համապատասխանում ՀՀ «Գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուականատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը՝ ներկայացված Ը.00.03 - «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ **բարեհաջող պաշտպանության դեպքում:**

Նիստի նախագահ՝

Հայ-Ռուսական համալսարանի Ռեկտոր,
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի պրոֆեսոր,
տնտ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր՝

Է. Մ. Սանդույան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների» ամբիոնի վարիչ,
տնտ. գիտ. դոկտոր, դոցենտ՝

Մ. Տ. Ոսկանյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի վարիչ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ռ. Բ. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Էկոնոմիկայի և ֆինանսների»
ամբիոնի դոցենտ, տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ՝

Ա. Տ. Գալստյան

Հայ-Ռուսական համալսարանի
«Տնտեսագիտության տեսության
և անցումային շրջանի տնտեսության հիմնախնդիրների»
ամբիոնի ավագ դասախոս, տնտ. գիտ. թեկնածու՝

Գ. Ա. Պետրոսյան

Հայ-Ռուսական համալսարանի
գիտական քարտուղար,
բան. գիտ. թեկնածու՝



Ռ. Ս. Կասարբովա